«ՋԻ ԹԻ ԲԻ Սթիլ» ՍՊԸ

Ֆինանսական հաշվետվություններ և
Անկախ աուդիտորի եզրակացություն

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

Օգոստոս 2026թ.

ք. Երևան

«ՋԻ ԹԻ ԲԻ Սթիլ» ՍՊԸ
Ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Բովանդակություն

3	Անկախ աուդիտորի եզրակացություն
5	Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
6	Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
7	Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
8	Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
9	Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների ցանկ
10	Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ

Ընկերության գտնվելու վայրը՝	Հայաստանի Հանրապետություն
Իրավական ձևը՝	Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերություն
Հիմնական գործունեության նկարագիրը՝	Ընկերության գործունեության բնույթը ներկայացված է Ծանոթագրություն 1-ում
Տնօրեն՝	Ամրիտ Պալ Սինգ Կանգ

Tel: +374 60 528899
E-mail: bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

23/6, Davit Anhaght Str.,
5th Floor, office 7
Yerevan, Armenia

Անկախ աուդիտորի եզրակացություն

«ՋԻ ԹԻ ԲԻ Սթիլ» ՍՊԸ-ի մասնակիցներին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ՋԻ ԹԻ ԲԻ Սթիլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության («Ընկերություն») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման էական քաղաքականությունների ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ Հաշվապահական Հաշվառման Ստանդարտներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի Միջազգային Ստանդարտներին (ԱՄՍ-ներին) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս հաշվետվության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում:

Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի միջազգային կանոնագրքի (ներառյալ Անկախության Միջազգային Ստանդարտները)» (ՀԷՄՍԽ կանոնագիրք)*, և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ կիրառելի էթիկայի պահանջների, և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն այդ կանոնների:

Մենք հավատացած ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ Հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխան պատրաստելու և ճշմարիտ ներկայացնելու, ինչպես նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, համապատասխան դեպքերում անընդհատ գործելու հետ կապված հարցերը բացահայտելու և կազմակերպության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել

Tel: +374 60 528899
E-mail: bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

23/6, Davit Anhaght Str.,
5th Floor, office 7
Yerevan, Armenia

Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը կամ երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար.

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խարդախության կամ սխալի արդյունքում առաջացող խեղաթյուրումները համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք՝ առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Հատկորոշում և գնահատում ենք՝ սխալի կամ խարդախության հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար են և համապատասխան մեր կարծիքը հիմնավորելու համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտն
- աբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:
- Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելուն, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի հաշվետվությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդ բացահայտումները անբավարար են, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր հաշվետվության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագայում տեղի ունեցող դեպքերը կամ ի հայտ եկող հանգամանքները կարող են հանգեցնել նրան, որ կազմակերպությունը դադարեցնի անընդհատության սկզբունքի կիրառումը:

Tel: +374 60 528899
E-mail: bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

23/6, Davit Anhaght Str.,
5th Floor, office 7
Yerevan, Armenia

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների ու գործարքների ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց տեղեկացնում ենք աուդիտի առաջադրանքի, պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, այդ թվում ներքին վերահսկողության համակարգում ցանկացած էական թերությունների մասին, որոնք մենք բացահայտել ենք աուդիտի ընթացքում:

«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ

Վահագն Սահակյան, FCCA
Տնօրեն

Սերգեյ Յակովլև, FCCA
Առաջադրանքի ղեկավար

27 օգոստոս 2026թ.

ք. Երևան

«ՋԻ ԹԻ ԲԻ Սթիլ» ՍՊԸ
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	Ծան.	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
Հասույթ	5	10,800,817	-
Ինքնարժեք	6	(8,656,389)	-
Համախառն շահույթ		**2,144,428**	-
Վարչական ծախսեր	8	(772,414)	(272,670)
Այլ եկամուտ	7	1,072,196	1,112,393
Իրացման ծախսեր	10	(288,994)	-
Այլ գործառնական ծախսեր	9	(196,248)	(578,283)
Գործառնական շահույթ		**1,958,968**	**261,440**
Ֆինանսական եկամուտ	11	302,369	131,754
Ֆինանսական ծախսեր	11	(1,181,111)	(234,414)
Այլ օգուտ, զուտ		290,830	43,484
Շահույթ մինչև հարկումը		**1,371,056**	**202,264**
Շահութահարկի գծով ծախս/(վերականգնում)	12	(150,110)	109,818
Տարվա զուտ շահույթ		**1,220,946**	**312,082**
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		**1,220,946**	**312,082**

Ֆինանսական հաշվետվությունները (էջ 6-38) հաստատվել են Ընկերության ղեկավարության կողմից 2026թ. օգոստոսի 27-ին:

Ամրիտ Պալ Սինգ Կանգ
Տնօրեն

Կարեն Խաչատրյան
Գլխավոր ֆինանսական տնօրեն

«ՋԻ ԹԻ ԲԻ Սթիլ» ՍՊԸ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

ԱԿՏԻՎՆԵՐ	Ծնթ.	31/12/2025թ. հազ. դրամ	31/12/2024թ. հազ. դրամ
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	13	11,954,538	6,351,233
Ոչ նյութական ակտիվներ		1,709	-
Հետաձգված հարկային ակտիվներ	12	423,068	493,318
Ոչ ընթացիկ կանխավճարներ		52,913	52,820
Տրամադրված փոխառություններ	14	2,043,618	1,050,241
		14,475,846	**7,947,612**
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	15	4,255,536	2,238,068
Տրամադրված փոխառություններ	14	10,990	18,921
Բանկային ավանդներ	17	1,065,844	849,766
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	16	2,105,943	1,966,930
Դրամական միջոցներ	17	679,996	186,783
		8,118,309	**5,260,468**
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		**22,594,155**	**13,208,080**
Սեփական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	21	1,005,131	868,801
Լրացուցիչ կապիտալ	21	(1,441,645)	(413,745)
Կուտակված վնաս	21	(274,335)	(1,495,281)
Ընդամենը սեփական կապիտալ		**(710,849)**	**(1,040,225)**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	20	15,195,776	11,625,851
Ակտիվներին վերաբերող շնորհներ	19	515,940	893,293
		15,711,716	**12,519,144**
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	20	3,913,781	508,610
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	18	3,679,507	1,220,551
		7,593,288	**1,729,161**
Ընդամենը պարտավորություններ		**23,305,004**	**14,248,305**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		**22,594,155**	**13,208,080**

	Ծան.	31/12/2025թ. հազ. դրամ	31/12/2024թ. հազ. դրամ
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր			
Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ		15,236,689	-
Այլ մուտքեր		172	14,368
Վճարում մատակարարներին		(12,515,098)	(1,697,859)
Հարկերի վճարում		(779,696)	(119,041)
Աշխատավարձի վճարում		(714,735)	(90,150)
Վարձակալությունից մուտքեր		181,765	43,000
Այլ ելքեր		(163,462)	(107,263)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր		**1,245,635**	**(1,956,945)**
Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր			
Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման գծով ելքեր		(2,910,208)	(2,313,843)
Ոչ ընթացիկ ակտիվների վաճառքից մուտքեր		-	1,000
Ստացված տոկոսներ		143,776	14,548
Տրված փոխառության վերադարձ		1,343,705	417,881
Փոխառության տրամադրում		(3,217,212)	(3,215,210)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր		**(4,639,939)**	**(5,095,624)**
Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր			
Բաժնետիրական կապիտալի թողարկում		136,330	868,800
Փոխառության/վարկի ստացում	20	5,897,700	8,137,120
Փոխառության/վարկի մարում	20	(1,527,845)	(1,716,229)
Փոխառության/վարկի տոկոսի մարում	20	(613,965)	(67,356)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր		**3,892,220**	**7,222,335**
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր		**497,916**	**169,766**
Դրամական միջոցներ տարեսկզբի դրությամբ	17	**186,783**	**16,484**
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ դրամական միջոցների գծով		(4,703)	533
Դրամական միջոցներ տարեվերջի դրությամբ	**17**	**679,996**	**186,783**

	Կանոնադրական կապիտալ հազ. դրամ	Լրացուցիչ կապիտալ հազ. դրամ	Կուտակված վնաս հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
Մնացորդ 1 հունվարի 2025	**868,801**	**(413,745)**	**(1,495,281)**	**(1,040,225)**
Կապիտալի ավելացում	**136,330**	**-**	**-**	**136,330**
Լրացուցիչ կապիտալ	-	(1,027,900)	-	(1,027,900)
Տարվա շահույթ	-	-	1,220,946	1,220,946
Մնացորդ 31 դեկտեմբերի 2025	**1,005,131**	**(1,441,645)**	**(274,335)**	**(710,849)**
Մնացորդ 31 հունվարի 2024	**1**	**369,771**	**(1,807,363)**	**(1,437,591)**
Կապիտալի ավելացում	868,800	-	-	**868,800**
Լրացուցիչ կապիտալ	-	(783,516)	-	**(783,516)**
Տարվա շահույթ	-	-	312,082	**312,082**
Մնացորդ 31 դեկտեմբերի 2024	**868,801**	**(413,745)**	**(1,495,281)**	**(1,040,225)**

Բովանդակություն

1. Ընկերության մասին 11
2. Պատրաստման հիմունքները....12
3. Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ....14
4. Ֆինանսական գործիքներ-ռիսկերի կառավարում 16
5. Հասույթ 20
6. Վաճառքի ինքնարժեք....21
7. Այլ եկամուտ 21
8. Վարչական ծախսեր 21
9. Այլ ծախսեր 22
10. Իրացման ծախսեր 22
11. Ֆինանսական եկամուտներ և ֆինանսական ծախսեր 22
12. Շահութահարկ....23
13. Հիմնական միջոցներ 25
14. Տրված փոխառություններ....26
15. Պաշարներ 27
16. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր 28
17. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ....28
18. Առևտրային և կրեդիտորական պարտքեր 29
19. Ակտիվներին վերաբերող շնորհներ....29
20. Վարկեր և փոխառություններ 30
21. Կանոնադրական կապիտալ և պահուստներ 33
22. Պայմանական պարտավորություններ....33
23. Գործարքներ փոխկապակցված կողմերի հետ....33
24. Հաշվետու ամսաթվից հետո տեղի ունեցած դեպքեր....35
25. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն 35
Հավելված Ա : Իրական արժեքի չափման բացահայտումներ 38

1. Ընկերության մասին

«ՋԻ ԹԻ ԲԻ Սթիլ» ՍՊԸ (այսուհետ՝ Ընկերություն) հիմնադրվել է 2022 թվականին: Ընկերության կանոնադրությունը պետական ռեգիստրում գրանցվել է 2022 թվականի հուլիսի 12-ին (գրանցման համար՝ 264.110.1251868):

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Արաբկիր 0019, Պռոշյան փողոց 12, իսկ գործունեության վայրը՝ ՀՀ, Արարատի մարզ, համայնք Արարատ, 0602, գյուղ Արարատ 1 հողամաս:

Հարկ վճարողի հաշվառման համար՝ 01041888:

“ՋԻ ԹԻ ԲԻ Սթիլ» ՍՊԸ-ն Հայաստանի օրենսդրությամբ գրանցված ընկերություն է, որն զբաղվում է երկրի մետալուրգիական արդյունաբերության վերականգնմամբ՝ տեղական աղբամետաղը վերամշակելով բարձրորակ ջերմո-մեխանիկական մշակմամբ ամրացման մետաղական ձողերի արտադրության համար: Ընկերությունը խթանում է կայուն արտադրությունը և աջակցում է տնտեսական աճին՝ օգտագործելով տեղական ռեսուրսները:

Ընկերության աշխատակիցների միջին թվաքանակը 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում էր 230 (31. 12. 2024թ. -ի դրությամբ՝ 110):

Հայաստանի գործարար միջավայրը

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում: Հետևաբար, Ընկերության գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկաները: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն ենթակա են տարբեր մեկնաբանությունների և հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար:

Հայաստանի և Ադրբեջանի միջև երկարատև ռազմական լարվածությունից հետո խաղաղության բանակցությունները և սահմանազատման գործընթացը շարունակում են ընթանալ: 2025 թվականի օգոստոսին կողմերը հանդիպեցին Վաշինգտոնում՝ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի ներկայությամբ և համաձայնեցին ստեղծել «Միջազգային խաղաղության և բարգավաճման Թրամփի ուղին» (TRIPP), որի նպատակն է խթանել տարածաշրջանային առևտուրը, էներգետիկ փոխադրումները և կապակցվածությունը՝ ենթակառուցվածքների զարգացման միջոցով, ներառյալ երկաթուղիները, նավթագազային խողովակաշարերը, օպտիկամանրաթելային ցանցերը և ավտոմայրուղիները:

2025-2026 թվականներին Մերձավոր Արևելքում աշխարհաքաղաքական իրավիճակը սրվեց՝ կապված ԱՄՆ-ի, Իսրայելի, Իրանի և նրանց տարածաշրջանային դաշնակիցների միջև ռազմական լարվածության աճի հետ: Այս զարգացումները մեծացրել են տարածաշրջանային անորոշությունը, նպաստել էներգետիկ շուկաների տատանողականությանը և բարձրացրել միջազգային փոխադրումների և առևտրի ուղիների խաթարման ռիսկերը:

Հայաստանի՝ Իրանի հետ աշխարհագրական մոտիկության և Ադրբեջանի հետ շարունակվող լարվածության պայմաններում վերոնշյալ զարգացումները հանգեցրել են տարածաշրջանում աշխարհաքաղաքական ռիսկերի աճին: Չնայած հաշվետու ամսաթվի դրությամբ Հայաստանի տարածքում անմիջական ռազմական գործողություններ չեն իրականացվել, սահմանների մոտ անկայունությունը կարող է բացասաբար անդրադառնալ տնտեսական պայմանների, սահմանային առևտրի, մատակարարման շղթաների և ներդրումային ակտիվության վրա:

Բացի այդ, Ռուսաստանի և Ուկրաինայի միջև շարունակվող հակամարտությունը նպաստում է ավելի լայն տարածաշրջանային միջավայրում անորոշության պահպանմանը:

Ռուսաստանի Դաշնության տնտեսական ակտիվությունը զգալի ազդեցություն ունի Հայաստանի

տնտեսության վրա՝ պայմանավորված զգալի ֆինանսական հոսքերով, ներառյալ դրամական փոխանցումները: Հետևաբար, Ռուսաստանի նկատմամբ քաղաքական լարվածությունը, միջազգային պատժամիջոցները, շուկաների անկայունությունը, գնաճային ճնշումները և այլ ռիսկեր կարող են բացասաբար անդրադառնալ Հայաստանի տնտեսական հեռանկարների վրա:

Միևնույն ժամանակ, Հայաստանի տնտեսությունը ցուցաբերել է կայունություն գլոբալ անկայունության պայմաններում՝ գրանցելով բարձր մակրոտնտեսական ցուցանիշներ ինչպես 2024, այնպես էլ 2025 թվականներին:

Աճը հիմնականում պայմանավորված է զբոսաշրջության աճով, ընկերությունների տեղափոխմամբ Հայաստան և դրամական փոխանցումների զգալի ավելացմամբ: Արդյունքում, 2025 թվականի հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածում ՀՆԱ-ի աճը կազմել է 7.1%: Կառավարության 2021-2026 թվականների տնտեսական ծրագիրը միտված է արտահանման վրա հիմնված և ներդրումներով պայմանավորված աճի մոդելի զարգացմանը՝ լայնածավալ բարեփոխումների միջոցով:

Այս միջավայրը էական ազդեցություն ունի Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա: Ղեկավարությունը իրականացնում է անհրաժեշտ միջոցառումներ՝ ապահովելու գործունեության կայունությունը: Այնուամենայնիվ, հաշվի առնելով աշխարհաքաղաքական և տնտեսական զարգացումների անկանխատեսելի բնույթը, ղեկավարությունը չի կարող վստահորեն գնահատել դրանց հնարավոր ազդեցությունը Ընկերության ապագա ֆինանսական արդյունքների և վիճակի վրա:

Ֆինանսական հաշվետվությունները արտացոլում են ղեկավարության գնահատականը Հայաստանի գործարար միջավայրի և դրա ազդեցության վերաբերյալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա: Ապագա զարգացումները կարող են տարբերվել այս գնահատականներից:

2. Պատրաստման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) և հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների (ՀՀՄՍԽ) կողմից մեկնաբանությունների համաձայն (միասին ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտներ):

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության սկզբունքի հիման վրա, ինչը ենթադրում է, որ Ընկերությունը կշարունակի գործել առանց տեսանելի ապագայում Ընկերության գործունեությունը դադարեցնելու կամ Ընկերությունը լուծարելու մտադրության: Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում ընդունված հիմնական հաշվապահական քաղաքականությունները ներկայացված են ծանորագրություն 25-ում: Այս քաղաքականությունները համաչափ կիրառվել են ներկայացված բոլոր տարիների նկատմամբ, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որը հանդիսանում է նաև Ընկերության ֆունկցիոնալ արժույթը:

Գումարային արժեքները կլորացվել են հազարներով, եթե այլ բան նշված չէ:

Փոխանցման օրվանից ընկերությունը ճանաչել է բոլոր ակտիվներն ու պարտավորությունները՝ համապատասխանաբար ՖՀՄՍ պահանջներին:

ՖՀՄՍ Հաշվապահական հաշվառման ստանդարտների համաձայն՝ ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս անհրաժեշտ է կատարել հաշվապահական հաշվառման նշանակալի գնահատումներ և դատողություններ: Վերջիններիս կիրառման ոլորտները և ազդեցությունը բացահայտված են Ծանոթագրություն 3-ում:

Չափման հիմքերը
Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի հիմունքով:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ

Ուժի մեջ մտած նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ

ա) 2025 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ

- Փոխանակելիության բացակայություն (ՀՀՄՍ 21 «Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը» (Փոփոխություն))

2023 թվականի օգոստոսի 15-ին ՀՀՄՍԽ-ն հրապարակեց «Փոխանակելիության բացակայություն»-ը, որով փոփոխվեց ՀՀՄՍ 21 «Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը» (Փոփոխություններ): Փոփոխությունները պահանջում են գնահատել, թե երբ է արժույթը փոխանակելի այլ արժույթի հետ, և երբ՝ ոչ: Փոփոխությունների համաձայն կազմակերպությունը պետք է գնահատի սփոթ փոխարժեքը, եթե այն եզրակացնում է, որ արժույթը փոխանակելի չէ այլ արժույթի հետ:

Այս փոփոխությունները որևէ ազդեցություն չեն ունեցել Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

Նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ, որոնք դեռևս ուժի մեջ չեն մտել

ՀՀՄՍ 8.30 Եթե կազմակերպությունը չի կիրառել հրապարակված, բայց դեռևս ուժի մեջ չմտած նոր ՖՀՄՍ, այն պետք է բացահայտի՝

(ա) այդ փաստը. և

(բ) հայտնի կամ ողջամտորեն գնահատելի տեղեկատվություն, որը վերաբերում է նոր ՖՀՄՍ-ի սկզբնական կիրառման ժամանակահատվածում կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների վրա դրա հնարավոր ազդեցության գնահատմանը:

ՀՀՄՍ 8.31 ՀՀՄՍ 8.30-ի համաձայն պետք է հաշվի առնել հետևյալ տեղեկատվության բացահայտումը՝
(ա) նոր ՖՀՄՍ-ի վերնագիրը,

(բ)հաշվապահական քաղաքականության մեջ առաջարկվող փոփոխության կամ փոփոխությունների բնույթը,

(գ) այն ամսաթիվը, նախքան որը ՖՀՄՍ-ը պետք է ընդունվի,

(դ) այն ամսաթիվը, նախքան որը նախատեսվում է ՖՀՄՍ-ի սկզբնական ընդունումը, և

(ե) կամ՝

(i) ակնկալվող ազդեցության քննարկումը. կամ
(ii) եթե այդ ազդեցությունը անհայտ է կամ չի կարող ողջամտորեն գնահատվել, այդ փաստը:

բ) Դեռևս ուժի մեջ չմտած ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ

Կան մի շարք ստանդարտներ, ստանդարտների փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք թողարկվել են ՀՀՄՍԽ-ի կողմից և գործելու են ապագա հաշվետու

ժամանակաշրջաններում, որոնք սակայն Ընկերությունը որոշել է վաղաժամ չընդունել:

Հետևյալ փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2026 թվականի հունվարի 1-ից սկսած տարեկան ժամանակաշրջանների համար.

- *Փոփոխություններ ֆինանսական գործիքների դասակարգման և չափման մեջ (ՖՀՄՍ 9-ի («Ֆինանսական գործիքներ») և ՖՀՄՍ 7-ի («Ֆինանսական գործիքներ. Բացահայտումներ») փոփոխություններ)*
- *Բնությունից կախված էլեկտրաէներգիայի վերաբերյալ պայմանագրեր (ՖՀՄՍ 9-ի և ՖՀՄՍ 7-ի փոփոխություններ):*

Հետևյալ փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2027 թվականի հունվարի 1-ից սկսած տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար.

- *ՖՀՄՍ 18 Ներկայացում և բացահայտում ֆինանսական հաշվետվություններում,*
- *ՖՀՄՍ 19 Դուստր ընկերություններ առանց հանրային ֆինանսական հաշվետվողականության. Բացահայտումներ:*

Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից 2024 թվականի ապրիլին հրապարակված ՖՀՄՍ 18-ը՝ «Ներկայացում և բացահայտում ֆինանսական հաշվետվություններում», փոխարինում է ՀՀՄՍ 1-ին և կիանգեցնի էական փոփոխությունների ՖՀՄՍ հաշվապահական ստանդարտներում, այդ թվում ՀՀՄՍ 8-ում՝ «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմքը» (նախկինում՝ «Հաշվապահական քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ»):

Չնայած ՖՀՄՍ 18-ը չի ազդի համախմբված ֆինանսական հաշվետվություններում հոդվածների ճանաչման և չափման վրա, այն, ինչպես կանխատեսվում է, էական ազդեցություն կունենա որոշակի հոդվածների ներկայացման և բացահայտման վրա: Այս փոփոխությունները ներառում են շահույթի կամ վնասի մասին հաշվետվության մեջ դասակարգումը և ենթագումարները, տեղեկատվության ագրեգացումը/ապագրեգացումը և պիտակավորումը, ինչպես նաև ղեկավարության կողմից սահմանված արդյունավետության չափանիշների բացահայտումը:

Ընկերությունը ներկայումս գնահատում է այս նոր հաշվապահական ստանդարտների և փոփոխությունների ազդեցությունը: Ընկերությունը չի ակնկալում, փոփոխությունները էական ազդեցություն կունենան իր ֆինանսական հաշվետվությունների վրա: Ընկերությունը չի ակնկալում, որ ՀՀՄՍԽ-ի կողմից թողարկված այլ ստանդարտներ, որոնք դեռ կիրառության մեջ չեն մտել, էական ազդեցություն կունենան Ընկերության վրա:

3. Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ընկերությունը կատարում է որոշ գնահատումներ և ենթադրություններ ապագա ժամանակաշրջանների վերաբերյալ: Գնահատումներն ու դատողությունները մշտապես վերանայվում են՝ հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, ինչպես նաև ապագա իրադարձությունների վերաբերյալ ողջամիտ ակնկալիքների վրա: Այդուհանդերձ, փաստացի փորձը կարող է տարբերվել կատարված գնահատումներից և ենթադրություններից: Ստորև ներկայացված են այն գնահատումները և ենթադրությունները, որոնք պարունակում են զգալի ռիսկ, քանի որ հաջորդ ֆինանսական տարում կարող են ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական ճշգրումների պատճառ հանդիսանալ:

<u>Գնահատումներ, ենթադրություններ և դատողություններ</u>

Շարունակական գործունեություն

Ընկերության ֆինանսական հաշվետվությունները պատրաստվում են շարունակական

գործունեության սկզբունքի հիման վրա, որը նախատեսում է սովորական գործունեության շարունակություն, ակտիվների վաճառք և պարտավորությունների կատարմանը սովորական գործարքային ընթացքի շրջանակում:

Ղեկավարությունը հավաստիացնում է, որ ընկերությունը կշարունակի իր գործունեությունը շարունակականության սկզբունքի համաձայն, և նման վճիռ կայացնելիս ղեկավարությունը հաշվի է առել ընկերության ընթացիկ մտադրություններն ու ֆինանսական վիճակը:

Գնահատումներն իրականացնելուց հետո Ընկերության ղեկավարությունը ողջամիտ հիմքեր ունի ենթադրելու, որ ընկերությունը կարող է շարունակել իր գործունեությունը տեսանելի ապագայում: Այսպիսով, ընկերությունը շարունակում է պահպանել գործունեության շարունակականության սկզբունքը իր ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ուստի այս ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում որևէ ճշգրտում, որը կարող է առաջանալ, եթե ընկերությունը չկարողանա շարունակել իր շարունակական գործունեությունը:

Ոչ ընթացիկ ակտիվների արժեզրկում

Արժեզրկումը տեղի է ունենում այն ժամանակ, երբ ակտիվի կամ դրամական միջոցների հոսքեր առաջացնող միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է դրա փոխհատուցվող արժեքը, որը երկու մեծություններից ամենամեծն է ՝ իրական արժեքը հանած օտարման ծախսերը և օգտագործման արժեքը: Իրական արժեքի հանած օտարման ծախսերը հաշվարկվում են հետևյալ կերպ. Օգտագործման արժեքի հաշվարկը հիմնված է զեղչված դրամական միջոցների հոսքերի (DCF) մոդելի վրա: Դրամական միջոցների հոսքերը հաշվարկվում են հաջորդ 20 տարիների բյուջեի հիման վրա և չեն ներառում վերակազմավորման գործողություններ, որոնք ընկերությունը դեռ չի սկսել կամ ապագա զգալի ներդրումներ, որոնք կբարձրացնեն փորձարկվող միավորի ակտիվների արդյունավետությունը:

Հաշվի առնելով կառավարման տեղեկատվության ինչպես արտաքին, այնպես էլ ներքին աղբյուրները՝ որոշվել է, որ 2025թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ արժեզրկման չափանիշներ առկա չեն:

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետները

Ղեկավարությունը հաշվարկել է հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետները՝ հիմնվելով ակտիվների կյանքի լավագույն գնահատման, ինչպես նաև այդ ակտիվների օգտագործումը շարունակելու իր մտադրության վրա: Ղեկավարությունը գտնում է, որ հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները էապես չեն տարբերվում դրանց տնտեսական շահագործման ժամկետներից: Եթե հիմնական միջոցների օգտակար ծառայության փաստացի ժամկետները տարբերվում են հաշվարկվածից, ապա ֆինանսական հաշվետվությունները նույնպես կարող են էականորեն տարբերվել:

Դատողություններ

Իրական արժեքի չափում

Մի շարք ակտիվներ և պարտավորություններ պահանջվում է չափել իրական արժեքով և/կամ բացահայտել դրանց իրական արժեքը Ընկերության ֆինանսական հաշվետվություններում:

Ընկերության ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափման համար հնարավորինս օգտագործվում են շուկայական դիտելի ելակետային տվյալներ: Իրական արժեքի չափման համար օգտագործվող ելակետային տվյալները դասակարգվում են ըստ տարբեր մակարդակների՝ կախված նրանից, թե որքանով են գնահատման մեթոդի մեջ օգտագործվող տվյալները դիտելի («իրական արժեքի հիերարխիա»):

- *Մակարդակ 1. Նույնական ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճշգրտված)*
- *Մակարդակ 2: Ուղղակի կամ անուղղակիորեն դիտելի ելակետային տվյալներ՝ բացառությամբ 1-ին մակարդակում ներառվող գնանշվող գներից*
- *Մակարդակ 3: Ոչ դիտելի ելակետային տվյալներ (այսինքն՝ հիմնված չեն շուկայական տվյալների վրա).*

Ակտիվների և պարտավորությունների դասակարգումը վերոնշյալ մակարդակներում հիմնվում է ամենացածր մակարդակի ելակետային տվյալների վրա, որոնք ունեն զգալի ազդեցություն իրական արժեքի չափման վրա: Տեղափոխությունը մի մակարդակից մյուսը ճանաչվում է այն ժամանակաշրջանում, որի ընթացքում այն տեղի է ունենում:
Ընկերության՝ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը էականորեն չի տարբերվում հաշվեկշռային արժեքից:

4. Ֆինանսական գործիքներ-ռիսկերի կառավարում

Իր գործունեության արդյունքում Ընկերությունը կարող է ենթարկվել ֆինանսական գործիքներին վերաբերող հետևյալ ռիսկերին.
- Պարտքային ռիսկ,
- Արտարժութային ռիսկ,
- Իրացվելիության ռիսկ

Ընկերությունը կարող է ենթարկվել իր կողմից ֆինանսական գործիքների օգտագործումից առաջացող ռիսկերի, ինչպես բնորոշ է մյուս բոլոր ձեռնարկատիրական գործունեություններին: Սույն ծանոթագրությունում ներկայացված են Ընկերության նպատակները, քաղաքականությունը, ռիսկերի կառավարման գործընթացները և դրանց չափման մեթոդները: Սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված է քանակական տեղեկատվություն վերոնշյալ ռիսկերի վերաբերյալ:

Ֆինանսական ռիսկերի կառավարման հիմնական խնդիրներն են ռիսկի սահմանումը և հետագայում ապահովումը, որ ռիսկի ազդեցությունը մնա այդ սահմաններում: Գործառնական և իրավական ռիսկերի կառավարման գործառույթները նախատեսված են ներքին քաղաքականության և ընթացակարգերի պատշաճ գործունեության ապահովման համար ՝ գործառնական և իրավական ռիսկերը նվազագույնի հասցնելու համար:

Ֆինանսական գործիքներից առաջացող ռիսկերի, Ընկերության նպատակների, քաղաքականության, ռիսկերի կառավարման գործընթացների և դրանց չափման մեթոդների հետ կապված նախորդ ժամանակաշրջանների համեմատ էական փոփոխություններ չեն գրանցվել:

(ա) Հիմնական ֆինանսական գործիքներ

Ընկերության հիմնական ֆինանսական գործիքները, որոնցից առաջանում են ֆինանսական գործիքների ռիսկեր, ներկայացված են ստորև.

- Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ
- Տրված փոխառություններ
- Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր
- Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր
- Վարձակալական պարտավորություններ

(բ) Ֆինանսական գործիքներ ըստ կատեգորիաների

Ֆինանսական հաշվետվություններում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ խմբերին:

Ֆինանսական ակտիվներ

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ.

	31/12/2025թ. հազ. դրամ	31/12/2024թ. հազ. դրամ
Առևտրային դեբիտորական պարտքեր	1,394,749	1,185,962
Դրամական միջոցներ	678,807	179,013
Ավանդներ	1,065,844	849,766
Տրված փոխառություններ	2,054,608	1,069,162
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**5,194,008**	**3,283,903**

Ֆինանսական պարտավորություններ

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ

	31/12/2025թ. հազ. դրամ	31/12/2024թ. հազ. դրամ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	2,572,564	1,176,175
Ստացված փոխառություններ	19,109,557	12,134,461
	21,682,121	**13,310,636**

(գ) Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքները ներառում են՝ դրամական միջոցները, առևտրային դեբիտորական պարտքերը, առևտրային կրեդիտորական պարտքերը:

Դրանց կարճաժամկետ բնույթի պատճառով դրամական միջոցների և դրանց համարժեքների, առևտրային և այլ դեբիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը մոտավորապես հավասար է դրանց իրական արժեքին:

Իրական արժեքի հիերարխիայի, գնահատման մեթոդների և իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում դասակարգվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի որոշման հետ կապված էական, ոչ դիտելի ելակետային տվյալների վերաբերյալ մանրամասն տեղեկությունները ներկայացված են Հավելված Ա-ում:

Ընդհանուր նպատակներ, քաղաքականություն և գործընթացներ

Ընկերության ընդհանուր նպատակն է մշակել այնպիսի քաղաքականություն, որն ուղղված է հնարավորինս նվազեցնել ռիսկերը ՝ առանց չափազանց մեծ ազդեցություն ունենալու ընկերության մրցունակության և արդյունավետության վրա: Այդ քաղաքականության մանրամասները ներկայացված են ստորև:

Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն այն ռիսկն է, որ Ընկերությունը կարող է կրել ֆինանսական կորուստներ, որոնք առաջանում են երրորդ կողմերի՝ Ընկերության նկատմամբ իրենց պարտավորությունները չկատարելու հետևանքով: Պարտքային ռիսկը ծագում է բանկային հաշիվների, առևտրի և այլ դեբիտորական պարտքերի հետ կապված: Չմարված առևտրային դեբիտորական պարտքերը վերաբերում են գործընկերներին, որոնց հավաքագրման անհնարինության ռիսկը գնահատվում է ցածր: Ընկերությունը չի պահանջում առևտրային դեբիտորական պարտքերի երաշխիքներ:

Պարտքային ռիսկը նվազեցնելու նպատակով ընկերությունը սահմանել է քաղաքականություն, ըստ որի՝ հետաձգված վաճառքներն իրականացվում են միայն հիմնական հաճախորդներին:

Պարտքային ռիսկը առաջանում է նաև կանխիկի և դրա համարժեքների հետ կապված: Ընկերությունն իր միջոցները տեղաբաշխում է միայն Հայաստանի խոշորագույն բանկերից մեկում:

Դրամական միջոցները բանկում

Չգալի քանակությամբ կանխիկ գումար պահվում է հետևյալ հաստատություններում:

	31/12/2025թ. հազ. դրամ	31/12/2024թ. հազ. դրամ
Ba3	22,283	662
Առանց վարկանիշի կամ ցածր վարկանիշով	657,713	186,121
Ընդամենը	**679,996**	**186,783**

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն առաջանում է Ընկերության տոկոսաբեր, առևտրային և արտարժութային ֆինանսական գործիքներից:

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական միջոցների հոսքերի տատանումների ռիսկն է տոկոսադրույքի (տոկոսադրույքային ռիսկ), արտարժութային փոխարժեքի (արտարժութային ռիսկ) կամ այլ շուկայական գործոնների (այլ շուկայական գործոնների ռիսկ) հետևանքով:

Ընկերությունը չի ենթարկվում տոկոսադրույքային ռիսկի:

Արտարժութային ռիսկ

Արժութային ռիսկը այն ռիսկն է, երբ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը տատանվում են արտարժույթի փոխարժեքների փոփոխությունների հետևանքով: Արտարժութային ռիսկն առաջանում է, երբ Ընկերության գործարքները, ճանաչված ակտիվներն ու պարտավորություններն արտահայտված են վերջինիս գործառնական արժույթից տարբեր արժույթով:

Այլ արժույթներով արտահայտված ակտիվների և պարտավորությունների համար Ընկերությունը հղում է կատարում ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հաշվետու ամսաթվի դրությամբ հրապարակված փոխարժեքներին, որոնք ներկայացված են ստորև (արժույթի միավորի արժեքը՝ արտահայտված ՀՀ դրամով):

	31/12/2025թ. հազ. դրամ	31/12/2024թ. հազ. դրամ
1 ԱՄՆ դոլար	381.36	396.56
1 Եվրո	449.01	413.89

Դեկտեմբերի 31-ի դրությամբ ընկերության զուտ ազդեցությունը արտարժույթի ռիսկին կազմել է:

	31/12/2025թ. հազ. դրամ	31/12/2024թ. հազ. դրամ
ԱՄՆ դոլար		
Ֆինանսական ակտիվներ		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	-	66,985
Տրված փոխառություններ	231,772	112,682
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**231,772**	**179,667**
Ֆինանսական պարտավորություններ		
Վարկեր և փոխառություններ	7,938,417	5,518,705
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	1,899,648	978,110
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**9,838,065**	**6,496,815**
Զուտ ազդեցություն	**(9,606,293)**	**(6,317,148)**

	31/12/2025թ. հազ. դրամ	31/12/2024թ. հազ. դրամ
Եվրո		
Ֆինանսական պարտավորություններ		
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	1,101	68,874
Զուտ ազդեցություն	**1,101**	**68,874**

ՀՀ դրամի նկատմամբ ԱՄՆ դոլարի 10%-անոց ամրապնդման ազդեցությունը (եթե մնացած բոլոր փոփոխականները մնան անփոփոխ) հաշվետու ամսաթվի դրությամբ կհանգեցներ զուտ ակտիվների 960,629 հազ. դրամով նվազման (2024թ. ՝ 631,714 հազ. դրամ նվազում): Դրամի նկատմամբ եվրոյի փոխարժեքի 10% - ով ամրապնդման ազդեցությունը (պայմանով, որ մնացած բոլոր փոփոխականները մնան անփոփոխ) հաշվետու ամսաթվի դրությամբ կհանգեցներ զուտ ակտիվների 110 հազար դրամով նվազման (2024թ. 6,887 հազ. դրամ նվազում): Փոխարժեքի 10% նվազումը կհանգեցնի զուտ ակտիվների հարկումից հետո նույն չափով աճի:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը այն ռիսկն է, երբ Ընկերությունը դժվարություններ է ունենում ֆինանսական պարտավորությունների հետ կապված իր պարտականությունները կատարելիս:

Ընկերության ղեկավարությունը շարունակական մոնիտորինգ է իրականացնում Ընկերության իրացվելիության գծով՝ ապահովելու համար գործառնական գործունեության համար անհրաժեշտ դրամական միջոցների առկայությունը:

Ընկերությունը չունի ածանցյալ ֆինանսական պարտավորություններ:

Ստորև ներկայացված են Ընկերության ֆինանսական պարտավորությունների (չզեղչված պայմանագրային դրամական միջոցների հոսքեր) մարման պայմանագրային ժամկետները.

Առ 31 դեկտեմբեր 2025թ.	Մինչև 3 ամիս հազ. դրամ	3-ից 12 ամիս հազ. դրամ	1-ից 2 տարի հազ. դրամ	2-ից 5 տարի հազ. դրամ	5 և ավել տարի հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ	Հաշվեկշռային արժեք հազ. դրամ
Վարկեր և փոխառություններ	2,548,913	2,721,747	4,420,786	11,147,989	1,316,377	**22,155,812**	**19,109,557**
Առևտրային կրեդիտորական պարտքեր	2,572,564	-	-	-	-	**2,572,564**	**2,572,564**
Ընդամենը	**5,121,477**	**2,721,747**	**4,420,786**	**11,147,989**	**1,316,377**	**24,728,376**	**21,682,121**

Առ 31 դեկտեմբեր 2024թ.	Մինչև 3 ամիս հազ. դրամ	3-ից 12 ամիս հազ. դրամ	1-ից 2 տարի հազ. դրամ	2-ից 5 տարի հազ. դրամ	5 և ավել տարի հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ	Հաշվեկշռային արժեք հազ. դրամ
Վարկեր և փոխառություններ	324,301	952,296	3,406,816	9,559,277	1,273,989	**15,516,679**	**12,134,461**
Առևտրային կրեդիտորական պարտքեր	1,176,175	-	-	-	-	**1,176,175**	**1,176,175**
Ընդամենը	**1,500,476**	**952,296**	**3,406,816**	**9,559,277**	**1,273,989**	**16,692,854**	**13,310,636**

Կապիտալի ռիսկի կառավարում

Կապիտալի կառավարման ժամանակ Ընկերության նպատակն է ապահովել Ընկերության շարունակական գործունեությունը, եկամտի ստացումը մասնակիցների և օգուտների ստացումն այլ շահագրգիռ կողմերի համար և պահպանել կապիտալի օպտիմալ կառուցվածք՝ կապիտալի արժեքը նվազեցնելու համար:

5. Հասույթ

	2025թ. հազ. դրամ	**2024թ. հազ. դրամ**
Ապրանքների վաճառքից հասույթ	10,176,533	-
Արտադրանքի վաճառքից հասույթ	565,473	-
Ծառայություն.մատուցումից հասույթ	58,811	-
Ընդամենը	**10,800,817**	**-**

Հասույթի մանրամասներն ըստ աշխարհագրական շրջանի.

	2025թ. հազ. դրամ	**2024թ. հազ. դրամ**
Հայաստան (տեղական շուկա)	10,800,817	-
Ընդամենը	**10,800,817**	**-**

Հասույթի մանրամասներն ըստ ճանաչման պահի.

	2025թ. հազ. դրամ	**2024թ. հազ. դրամ**
Ժամանակի որևէ պահին	10,800,817	-
Ընդամենը	**10,800,817**	**-**

6. Վաճառքի ինքնարժեք

	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
Հումք և նյութեր	5,525,026	-
Մաշվածություն	1,227,631	-
Կոմունալ ծառայություններ	1,198,678	-
Աշխատավարձ	698,681	-
Նորոգման և սպասարկման ծառայություններ	3,743	-
Շինանյութեր	2,630	-
Ընդամենը	**8,656,389**	**-**

7. Այլ եկամուտ

	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
Շնորհներից և անհատույց ստացումներից եկամուտներ	778,380	390,806
Գործառնական վարձակալությունից եկամուտներ	289,680	289,680
Այլ պաշարների օտարումից եկամուտներ	-	428,978
Գործառնական այլ եկամուտներ	4,136	2,929
